



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 12

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2021 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 30 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Ուսումնական տարվա սկսման հետ կապված հարցեր:
2. Առաջին կուրսեցիների դիմավորման աշխատանքների ընթացքը:
3. Սեպտեմբերի 23 – ին կայանալիք Հակոբ Կարապենցին նվիրված միջազգային գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների ընթացքը:
4. Հայ բանասիրության ֆակուլտետում Վահան Թեքեյանի անվան սփյուռքահայ գրականության ուսումնագիտական կարիներտ ստեղծելու հարցի քննարկում:
5. Ընդունելության քննությունների հետ կապված հարցերի քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 27 - ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ դասատախտակը կազմելու համար որոշակի դժվարություններ են ստեղծում հատկապես կամրնտրական դասընթացները, ինչպես նաև առարկաների կիսամյակային տեղափոխությունները: Չնայած նմանատիպ խնդիրներին՝ ուսումնական տարվա նախաշեմին ֆակուլտետը ամբողջությամբ պատրաստ է առկա ձևաչափով ուսումնական գործընթացին:

Օրակարգի 2 - ըդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ այս տարի հայ բանասիրության ֆակուլտետ է ընդունվել 56 ուսանող: Պրոֆ. Ա. Ավագյանը նշեց, որ այս թիվը չնայած զիջում է նախորդ տարիներին ֆակուլտետ ընդունվածների թվին, սակայն հաշվի առնելով համավարակը, պատերազմի հետևանքով առաջացած ծանր բարոյահոգեբանական իրավիճակը՝ կարելի է այն բավարար համարել և հույս հայտնել, որ հաջորդ տարիներին ուսանողների թիվը կավելանա: Պրոֆ. Ա. Ավագյանը նաև տեղեկացրեց, որ առաջին կուրսեցիների հանդիսավոր ընդունելությունը կազմակերպվելու է սեպտեմբերի 1 – ին, իսկ ավանդական այցելությունը Կոմիտասի անվան քաղաքային պանթեոն համավարակով պայմանավորված այս տարի չի կայանա:

Օրակարգի 3 - ըդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ Հակոբ Կարապենցին նվիրված միջազգային գիտաժողովը հետաձգվել էր համավարակի պատճառով և տեղի կունենա սեպտեմբերի 23 – ին, կանցկացվի մեկ օրով, իսկ գիտաժողովի զեկույցները կհրատարակվեն առանձին գրքով:

Օրակարգի 4 - ըդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ հայ բանասիրության ֆակուլտետում դասավանդվում են սփյուռքահայ գրականության տարբեր հեղինակներին վերաբերող դասընթացներ, տրվում են ավարտական և կուրսային աշխատանքների թեմաներ: Ա. Ավագյանը նշեց, որ ֆակուլտետը նպատակ ունի ստեղծելու Վահան Թեքեյանի անվան սփյուռքահայ գրականության ուսումնագիտական կաբինետ, որը կծառայի միաժամանակ որպես թեքեյանագիտության և սփյուռքահայ գրականության կենտրոն:

Օրակարգի 5 – րդ հարցի առթիվ պրոֆ. Ա. Ավագյանը ներկայացրեց, որ մինչև այս ուստարին ԵՊՀ բակալավրի՝ <<Հայոց լեզու և գրականություն>> կրթական ծրագրի համար դիմորդները հանձնել են <<Հայոց լեզու և գրականություն>> /բանավոր/ և <<Հայոց լեզու և գրականություն /գրավոր/ ընդունելության քննությունները: Այժմ առաջարկվում է <<Հլգ>> /բ/ քննության փոխարեն մտցնել <<Օտար լեզու>> /գրավոր/ քննությունը՝ նկատի ունենալով, որ այդ դեպքում թափուր տեղերի առկայության ժամանակ կարող են այդ մասնագիտությամբ դիմել նաև <<Օտլ>> /գ/ հանձնած դիմորդները: Ծավալված քննարկման ժամանակ գիտխորհրդի անդամները կողմ էին նախագծի <<Հլգ>> /գ/ քննությունը թողնել անփոփոխ, իսկ <<Օտլ>> /գ/ քննությանը զուգահեռ կամընտրական սկզբունքով /ընտրում է դիմորդը/ թողնել նաև <<Հլգ>> /բ/ քննությունը՝ նկատի ունենալով ներքոհիշյալ հիմնավորումները:

1. Ներկա փուլում հատկապես մարզերից եկող դիմորդների համար լրացուցիչ ֆինանսական բեռ է դառնում <<Օտլ>> /գ/ առարկան պարապել, մինչդեռ բանավոր քննությունը նրանց մեծամասնությունը հանձնում է <<Հայոց լեզու և գրականություն /գրավոր/ քննության ժամանակ պարապած գիտելիքներով:
2. Գյուղերի զգալի մասում /բակալավրի այս ծրագրով դիմորդների մեծամասնությունը հենց գյուղերից են/ <<Օտար լեզու>> առարկայի ուսուցումը դեռևս բավարար հիմքերի վրա չէ, որպեսզի դիմորդները կրկնուսույցի կարիք չունենան, մինչդեռ <<Հայոց լեզու և գրականություն>> առարկայի դեպքում պատկերը փոքր – ինչ այլ է:
3. <<Օտլ>> /գ/ առարկայի դեպքում դիմորդը առաջին հայտով ավելի մեծ ընտրության հնարավորություն է ունենում, և մտավախություն կա, որ ֆակուլտետը կկորցնի հենց իր հիմնական դիմորդներին, ովքեր կարող են գայթակղվել <<ավելի մոդայիկ>> մասնագիտություններով:
4. Կամընտրական սկզբունքը հնարավորություն կտա պահպանել հիմնական դիմորդներին և լրացուցիչ հնարավորություն կընձեռի <<Օտլ>> /գ/ հանձնած, սակայն մրցույթի արդյունքներով դուրս մնացած մյուս դիմորդների համար:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հիմք ընդունելով վերը հիշատակված խնդիրները՝ գիտխորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց դիմել ռեկտորատին՝ առաջարկելով <<Հայոց լեզու և գրականություն>> բակալավրի կրթական ծրագրի համար որպես ընդունելության քննություն պահպանել առաջարկված <<Հայոց լեզու և գրականություն>> /գրավոր/, իսկ <<Հայոց լեզու և գրականություն>> /բանավոր/ և <<Օտար լեզու>> /գրավոր/ քննությունների ընտրությունը թողնել դիմորդի հայեցողությանը:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ **ԼՍԵՑԻՆ** – Հայ բանասիրության ֆակուլտետի առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», «Հայ գրականություն», «Նորագույն շրջանի հայ գրականություն և գրաքննադատություն» ծրագրերի դասընթացները առցանց կազմակերպելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը և Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ ֆակուլտետի առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», «Հայ գրականություն», «Նորագույն շրջանի հայ գրականություն և գրաքննադատություն» ծրագրերի ուսանողները դեկանատ են դիմել խնդրանքով, որ դասընթացները առցանց կազմակերպվեն: Ելույթ ունեցողները նշեցին, որ հատկապես մագիստրատուրայի 2 – րդ կուրսում ուսանողների մեծամասնությունը աշխատում է, ուստի նրանց համար ավելի նպատակահարմար է դասերը անցկացնել հեռավար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել ռեկտորատին՝ թույլ տալ, որ առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», «Հայ գրականություն», «Նորագույն շրջանի հայ գրականություն և գրաքննադատություն» ծրագրերի ուսանողների դասընթացները կազմակերպվեն առցանց՝ ըստ դասատախտակի:

բ/ **ԼՍԵՑԻՆ** - Մանկավարժի որակավորման առկա ուսուցման կրթաբլոկում 7-րդ կիսամյակում նախատեսված «Նորագույն կրթական տեխնոլոգիաներ» դասընթացը առցանց անցկացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Ս. Գրիգորյանը և ուրիշներ:

Նշվեց, որ մանկավարժի որակավորման առկա ուսուցման կրթաբլոկում 7-րդ կիսամյակում նախատեսված է դասավանդել «Նորագույն կրթական տեխնոլոգիաներ» դասընթացը: Դասընթացը կազմակերպելու համար միավորվում են տարբեր ֆակուլտետների խմբեր (հայ բանասիրության ֆակուլտետ՝ 27 ուսանող, պատմության՝ 12, մշակութաբանության 11, փիլիսոփայության և հոգեբանության՝ 3): Առարկան դասավանդելու է հրավիրյալ դասախոս՝ ԿԳՄՍ լիցենզավորման բաժնի պետ, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Վարուժան Խաչատրյանը: Դժվարություն է առաջանում դասընթացի կազմակերպման համար համապատասխան հարմար դասաժամ գտնելու հարցում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել ռեկտորատին՝ թույլ տալ այդ դասաժամը կազմակերպել առցանց՝ շաբաթ օրերին՝ 3-4 ժամերին:

գ/ **ԼՍԵՑԻՆ** - ԵՊՀ բակալավրի՝ <<Հայոց լեզու և գրականություն>> կրթական ծրագրի մանկավարժի որակավորման դասընթացների վերակազմակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Ս. Գրիգորյանը և ուրիշներ:

Նշվեց, որ մանկավարժի որակավորման դասընթացները ներդրման պահից լրացուցիչ ծանրաբեռնվածություն են դարձել ուսանողների համար, որոնց դիմաց ուսանողն իր բուն վարձավճարից զատ կատարում է հավելյալ վճարում, հանձնում մի շարք քննություններ: Այս իրողությունը հատկապես վատ է ազդում դիմորդների հարցում՝ մասնավորապես՝ շրջանների դպրոցների շրջանավարտները դիմում են

մանկավարժական համալսարան և ոչ ԵՊՀ, քանի որ հետագայում աշխատանքի տեղավորման բարդությունների առջև են կանգնելու իրենց բնակավայրերում, որտեղ միակ մասնագիտական աշխատանքը ուսուցչությունն է (ի դեպ՝ մարզերում հայոց լեզվի և գրականության ուսուցիչների ահավոր պակաս կա): Ելույթ ունեցողները նշեցին, որ վերջին տարիներին մանկավարժի որակավորման հարցը դարձել է նաև հավելյալ շահարկումների առարկա: Մասնավորապես որոշ բուհեր հետևողականներեն վարում են անբարեխիղճ մրցակցություն՝ դիմորդներին ներկայացնելով ոչ թե իրենց բուհերի առավելությունները, այլ այն, թե ԵՊՀ շրջանավարտը չի ստանում մանկավարժի որակավորում, հետևապես չի կարող աշխատել դպրոցում: Այս հակաքարոզչությունը ակտիվ աշխատում է հատկապես մարզերում ԵՊՀ կողմից ինֆորմացիայի պակասի հետևանքով: Նշվեց նաև, որ ժամանակին որևէ խնդիր չէր ներկայացնում այն, որ ԵՊՀ շրջանավարտին շնորհվում էր /մասնագիտությանը զուգահեռ/ մանկավարժի որակավորում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Նկատի առնելով վերոհիշյալ հիմնավորումները՝ միջնորդել ԵՊՀ ղեկավարությանը ԿԳՄՍ նախարարության առջև հարց բարձրացնել մանկավարժի որակավորման լրացուցիչ դասընթացներն ընդգրկել ընդհանուր կրթական շրջանակներում՝ հնարավորություն ստեղծելով ԵՊՀ շրջանավարտներին մեկ միասնական որակավորմամբ ստանալ նաև մանկավարժի աստիճան՝ առանց հավելյալ վճարումների և ամփոփիչ ավարտական քննության:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ